## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
*Մարզկենտրոնը՝ք. Գյումրի*

*RA Marz of SHIRAK*
*The capital of marz-t. Gyumri*

**Марз ШИРАК РА**
Центр марза-г. Гюмри

| | |
|---|---|
| Տարածքը | 2681 քառ. կմ |
| Քաղաքային համայնքներ | 3 |
| Գյուղական համայնքներ | 116 |
| Գյուղական բնակավայրեր | 128 |

| | |
|---|---|
| *Territory* | *2681 km²* |
| *Urban communities* | *3* |
| *Rural communities* | *116* |
| *Rural settlements* | *128* |

| | |
|---|---|
| Территория | 2681 кв.км. |
| Городские общины | 3 |
| Сельские общины | 116 |
| Населенных пунктов | 128 |

***ՀՀ Շիրակի մարզը*** զբաղեցնում է ՀՀ տարածքի 9%-ը, գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Սահմանակից է Թուրքիայի և Վրաստանին: ՀՀ Շիրակի մարզն իր անունը ժառանգել է պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Շիրակ գավառից: Մարզի բնակչության թվաքանակը, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների, կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8,8%-ը: Բնակչության շուրջ 61,5%-ը բնակվում է քաղաքներում:

Մարզն ընդգրկում է Արթիկի, Ախուրյանի, Անիի, Ամասիայի և Աշոցքի նախկին

Marz of ***Shirak of RA*** occupies 9% of the whole territory of Armenian, it is situated in the northwest of the republic and borders Turkey and Georgia. Shirak marz inherited its name from Shirak region of Ayrarat state of historical Armenia. The number of its population, according to the results of the census taken in RA in 2001 made 8.8% of the total population of the republic. Almost 61.5% of population lives in towns.

This marz includes the territories of former administrative districts of Artik, Akhuryan, Ani, Amasia, and Ashotsk, 3 towns-Gyumri, Artik, Maralik and 128 rural settlements.

**Town Gyumri** (1924-1990 - Leninakan) is situated on the left bank of the Akhuryan river at a distance of, 120 km from Yerevan. It is the second town of the republic by its importance and population number. The population number, according to the results of the census taken in RA in 2001 made 150 917 people.

**The town Artik** is situated on the north-western slope of the mountain range Aragats, it is 1760 m above sea level. The number of population,

**Марз Ширака РА,** на северо-западе занимает 9% территории республики. Граничит с Турцией и Грузией. Марз Ширак РА, свое название унаследовало от провинции Ширак, исторического армянского мира Айрарат. Численность насиления марз, по результатам переписи населения РА 2001 г., составила 8,8% общей численности населения республики. Почти 61,5% населения проживает в городах. В состав марза входят бывшие административные районы Артика, Ахуряна, Ани, Амасии и Ашоцка. Он включает в себя 3 города: Гюмри, Артик, Маралик и 128 сельских населеных пунктов.

**Город Гюмри** (1924-1990гг.- Ленинакан) находится на левом берегу реки Ахурян, на расстоянии 120 км от Еревана. Это второй, по численности населения и значимости, город Республики Армения.

տարածաշրջանները: Այն իր մեջ ներառում է 3 քաղաք՝ Գյումրի, Արթիկ, Մարալիկ և 128 գյուղական բնակավայրեր:

***Գյումրի քաղաքը*** (1924-1990թթ.՝ Լենինական) գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին, Երևանից 120կմ հեռավորության վրա: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքն է: Բնակչության թվաքանակն, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների, կազմել է 150917 մարդ:

***Արթիկ քաղաքը*** գտնվում է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1760մ է: Արթիկ քաղաքի բնակչության թվաքանակը, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների, կազմել է 17561 մարդ:

***Մարալիկ քաղաքը*** գտնվում է Արագած լեռնազանգվածի արևմտյան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1920մ է: Այստեղով է անցնում Գյումրի-Թալին-Երևան մայրուղին: Մարալիկ քաղաքի բնակչության թվաքանակն, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների, կազմել է 5782 մարդ:

according to the results of the census taken in RA in 2001 made 17 561 people.

The town Maralik is situated on the western slope of the mountain range Aragats, it is 1920 m above sea level. The highway Gyumri-Talin-Yerevan passes through Maralik towm. The population number of Maralik, according to the results of the census taken in RA in 2001 made 5782 people.

Численность населения, по результатам переписи населения РА 2001 г., составила 150917% человек.

**Город Артик** находится на северо-западном склоне горного массива Арагац на высоте 1760 м над уровнем моря. Численность населения города Артик, по результатам переписи населения РА 2001 г., составила 17 561 человек.

**Город Маралик** находится на западном склоне горного массива Арагац, на высоте 1920м над уровнем моря. Здесь проходит шоссе Гюмри-Талин-Ереван. Численность населения города Маралик, по результатам переписи населения РА 2001 г., составила 5782 человек.